# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 529-Ա

## «ՍԻԹԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի սեպտեմբերի 10-ի նիստում, քննարկելով «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

***1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.***

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի հունիսի 11-ի «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 255-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 255-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-02410/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

«Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) թիվ 255-Ա որոշումը ստացել է 2024 թվականի հունիսի 12-ին և 2024 թվականի հուլիսի 17-ին ներկայացրել է գրավոր դիրքորոշում (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում 1**):

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի օգոստոսի 26-ի թիվ 009858 գրությամբ Ընկերությանն առաջարկվել է ներկայացնել գրավոր դիրքորոշում՝ Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության կողմից կազմված ««Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02410/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**) առնչությամբ:

Ընկերությունը 2024 թվականի սեպտեմբերի 5-ին ներկայացրել է Տեղեկանքի առնչությամբ գրավոր դիրքորոշում (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում 2**) :

***2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.***

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը 2024 թվականի մայիսի 31-ի թիվ ՄՊՀ-006028 զեկուցագրով առաջարկել է Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Վարույթը հարուցվել է 2023 թվականի սեպտեմբերի 29-ին արտադրված, Ընկերության կողմից ներմուծված «Домашние секреты» ապրանքային նշանով տոմատի մածուկի (այսուհետ նաև՝ **Ապրանք**) առնչությամբ Ընկերության վարքագծում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

***3. Ընկերության դիրքորոշումը.***

Ընկերությունը Դիրքորոշում 1-ում հղում կատարելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 279-րդ հոդվածին և Սահմանադրական դարանի 2010 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ՍԴՈ-920 որոշմանը՝ հայտնել է, որ 2023 թվականի հոկտեմբերի 6-ին տարանցիկ փոխադրման հայտարարագրի լրացուցիչ թերթիկում (դրանում առկա է ՀՀ մաքսային ծառայության կնիքը) նշված է, որ փոխադրվող Ապրանքը հետևյալն է. «консервированная томатная паста, приготовленная без добовления уксуса или уксусной кислоты, с содержанием сухого вещества 25%»: Այսինքն' ըստ փոխադրման հայտարարագրի լրացուցիչ թերթիկում առկա տեղեկությունների' փոխադրվող տոմատի մածուկում չոր նյութերի պարունակությունը կազմում է 25%, ինչը նշանակում է, որ ««Գրանդ Սթար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Գրանդ Սթար» ընկերություն**) կողմից Ընկերությանը տրամադրված Ապրանքը համապատասխանում է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 021/2011 տեխնիկական կանոնակարգի (այսուհետ նաև՝ **Կանոնակարգ**) 2-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերության և թիվ 3343-2017 ԳՕՍՏ-ի (այսուհետ նաև՝ **ԳՕՍՏ**) 5-րդ բաժնի 2-րդ մասի 2-րդ աղյուսակով նախատեսված պահանջներին:

«Գրանդ Սթար» ընկերության կողմից Ընկերությանը տրամադրվել է նաև 2023 թվականի հոկտեմբերի 6-ի որակի վերաբերյալ թիվ 765 վկայական, որի 5-րդ տողում նշված է հետևյալը. «Паста томатная 25% ТМ «Домашние секреты»», ինչպես նաև Ապրանքի համապատասխանությունը նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի վերաբերյալ նշվել է հետևյալը. «Соотвествие норм-тех документу - ТУ10.39.17-017-45986955-2020»:

Համաձայն «Գրանդ Սթար» ընկերության տնօրենի կողմից 2021 թվականի փետրվարի 1-ին Ընկերությանը տրված համապատասխանության մասին հայտարարագրի' «Գրանդ Սթար» ընկերության կողմից արտադրվող տոմատի մածուկը համապատասխանում է Կանոնակարգին: Բացի այդ, համապատասխանության մասին հայտարարագրում նշվել է, որ այն ընդունվել է հիմք ընդունելով «Փորձարկման

արձանագրություն թիվ 0009. 1Д, 0010.1Д, 0011.1Д, 2021 թվականի հունվարի 25-ի դաշնային բյուջետային առողջապահական հաստատության Ուստ-Լաբինսկի մասնաճյուղի փորձարկման լաբորատոր կենտրոն «Կրասնոդարի երկրամասի հիգիենայի և համաճարակաբանության կենտրոն», RA, RU.514335; փորձարկման արձանագրություն 03.09.2020 թ. թիվ 1129, փորձարկման լաբորատորիա «Կրասնոդարի երկրամասի առևտրի արդյունաբերական պալատ» միություն, RA, RU, 21ПП90, հայտարարագրման սխեմա 3 д», «протокол испытаний թիվ 0009. 1Д, 0010.1Д, 0011.1Д от 25.01.2021г. испытательный лабораторный центр Усть-Лабинского филиала Федерального бюджетного учреждения здравоохранения «Центр гигиены и эпидемиологии в Краснодарском крае», RA, RU, 21ПП90, Схема декларирования 3 д» «.», ինչը վկայում է այն մասին, որ Ապրանքը ենթարկվել է փորձաքննության:

Վերը նշված փաստաթղթերը հիմք ընդունելով՝ Ընկերության մոտ իրավացիորեն ձևավորվել է այն համոզմունքը, որ «Գրանդ Սթար» ընկերության կողմից մատակարարված ապրանքը ամբողջությամբ համապատասխանում է օրենսդրական պահանջներին, և այլևս որևէ կասկած չի հարուցվել Ապրանքի որակի հետ կապված: Ապրանքի ներմուծման ժամանակ ստանալով նշված փաստաթղթերը՝ Ընկերությունը դրսևորել է պատշաճ և բավարար ջանասիրություն համոզվելու, որ Ապրանքի որակական հատկանիշները համապատասխանում են ներկայացվող պահանջներին, ուստի խոսք գնալ չի կարող Ընկերության կողմից հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության մասին:

Ընկերությունը գտնում է, որ տվյալ դեպքում Վարույթի ընթացքում անհրաժեշտ է պարզել Ընկերության մեղքի առկայությունն այն պայմաններում, երբ առկա են մի շարք փաստաթղթեր Ապրանքի՝ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ:

Ընկերությունը նշել է, որ անկախ այն հանգամանքից, թե Վարույթի ընթացքում կհաստատվի Ընկերության կողմից ներմուծված տոմատի մածուկի համապատասխանությունն իրավական նորմերի պահանջներին, թե ոչ, այնուամենայնիվ, Ընկերության մեղքը Ապրանքի՝ իրավական նորմերին համապատասխան չլինելու դեպքում բացակայում է, քանի որ Ընկերությունը ստացել է տոմատի մածուկ արտադրող «Գրանդ Սթար» ընկերության կողմից համապատասխան երաշխիքներ պատշաճ որակի Ապրանք ձեռքբերելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը հարկ է համարել Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ օրենսդրությամբ նախատեսված չէ Ընկերության պարտականությունը յուրաքանչյուր դեպքում իրականացնել ներմուծվող ապրանքի փորձաքննություն, Ընկերությունը չունի բավարար ռեսուրսներ իրականացնելու այն, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքում ներմուծվող ապրանքների փորձաքննություն իրականացնելը լուրջ խոչընդոտներ կհարուցի Ընկերության տնտեսական գործունեության իրականացմանը, այդ իսկ պատճառով մատակարար ընեկերությունների կողմից համապատասխան երաշխիքների տրամադրման դեպքում Ընկերությունը դրանք հիմք է ընդունում, և ձեռքբերվող ապրանքների լրացուցիչ ստուգումներ չեն իրականացվում: Հատկանշական է նաև, որ յուրաքանչյուր ապրանք ներմուծելիս փորձաքննության իրականացումը նույնպես չի կարող հանդիսանալ երաշխիք ապրանքի

անհամապատասխանությունը բացահայտելու համար, քանի որ ամբողջ խմբաքանակը չի կարող ենթարկվել փորձաքննության, իսկ ընտրված նմուշների փորձաքննությունը չի բացառում նույն խմբաքանակի այլ ապրանքների որակի անհամապատասխանությունը:

Ամփոփելով վերը նշվածը՝ Ընկերությունը եկել է այն եզրահանգման, որ չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության, քանի որ բացակայում է Ընկերության մեղքը, և վերջինիս տիրապետման ներքո առկա ապացույցները հաշվի առնելով՝ Ընկերության մոտ որևէ կասկած չի հարուցվել Ապրանքի՝ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին ենթադրաբար համապատասխան չլինելու վերաբերյալ:

Բացի դա, Ընկերությունը չլինելով Ապրանքի արտադրողը չի կարող պատասխանատվության ենթարկվել հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության համար այն դեպքում, երբ վերջինիս Ապրանքի որակական հատկանիշների մշակման փուլում որևիցե գործողություն չի իրականացրել, այլ ներմուծել և իրացրել է արդեն պատրաստի Ապրանքը, որն ուղեկցվել է որակի համապատասխանությունը հաստատող մի շարք փաստաթղթերով:

Ամփոփելով նշվածը Ընկերությունը փաստել է, որ տվյալ դեպքում Ընկերության գործողություններում բացակայում են Վարույթով նախատեսված հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշները, ուստի բացակայում է իրավախախտման դեպքը, որպիսի պայմաններում Վարույթը ենթակա է կարճման:

Ընկերությունը հղում կատարելով Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և Օրենքի 92-րդ հոդվածին, ինչպես նաև **h**աշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության գործողություններում և վարքագծում բացակայում է իրավախախտման դեպքը՝ խնդրել է Հանձնաժողովին Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց չկիրառել և կարճել Վարույթը, իսկ այնուամենայնիվ Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու դեպքում՝ տալ նախազգուշացում:

Ընկերությունը Դիրքորոշմանը կից ներկայացրել է 06.10.2023թ. տարանցիկ փոխադրման հայտարարագրի լրացուցիչ թերթիկի պատճենը, «Գրանդ Սթար» ընկերության կողմից Ընկերությանը տրամադրված 06.10.2023թ. որակի վերաբերյալ թիվ 765 վկայականը, «Գրանդ Սթար» ընկերության տնօրենի կողմից 2021 թվականի փետրվարի 1-ին Ընկերությանը տրված համապատասխանության մասին հայտարարագրի պատճենը, 2021 թվականի հունվարի 25-ի թիվ թիվ 0009. 1Д, 0010.1Д, 0011.1Д փորձարկման արձանագրությունների պատճենները և 2020 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1129 փորձարկման արձանագրության պատճենը:

Ընկերությունը Դիրքորոշում 2-ով հայտնել է, որ Տեղեկանքում հաշվի չի առել Ընկերության կողմից ներկայացված փաստարկներն առ այն, որ նշված ապրանքը ներմուծելուց Ընկերությանը տրամադրվել են մի շարք փաստաթղթեր, որոնցով հաստատվել է ապրանքը ԳՈՍՏ-ի պահանջներին համապատասխանելու փաստը, մասնավորապես՝ «Գրանդ Սթար» ՍՊԸ-ի կողմից Ընկերությանը տրամադրվել է 06.10.2023թ. որակի վերաբերյալ թիվ 765 վկայական, ինչպես նաև համապատաս-խանության մասին հայտարարագիրը, որոնց բովանդակությունից բխում է, որ ապրանքը համապատասխանում է սահմանված պահանջներին: Հատկանշական է, որ

հայտարարագրի կազմման համար հիմք են հանդիսացել փորձաքննության արդյունքները: Բացի այդ 06.10.2023թ. տարանցիկ փոխադրման հայտարարագրի լրացուցիչ թերթիկում (դրանում առկա է ՀՀ մաքսային ծառայության կնիքը) նույնպես նշվել է, որ փոխադրվող տոմատի մածուկում չոր նյութերի պարունակությունը կազմում է 25%:

Ուշադրության է արժանի նաև այն, որ օրենսդրությամբ, նշված ապրանքի ներմուծման ժամանակ որակի համապատասխանության հարցը պարզելու համար սահմանված չէ փորձաքննության անցկացման պարտադիր պահանջ, ուստի Ընկերությունը ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունից ելնելով իրավացիորեն ենթադրել է, որ իր կողմից իրացվող ապրանքն ամբողջությամբ համապատասխանում է սահմանված պահանջներին:

Ասվածից հետևում է, որ Ընկերությունը դրսևորել է պատշաճ և բավարար ջանասիրություն համոզվելու, որ ապրանքի որակական հատկանիշները համապատասխանում են ներկայացվող պահանջներին, ուստի Ընկերության գործողություններում բացակայում են հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշները:

Ընկերությունը հղում անելով Օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասին, 1089-րդ հոդվածին, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածին, ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-920 որոշմանը, Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6382/05/20 վարչական գործով 2023 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմանը հայտնել է, որ Վարույթի շրջանակներում քննարկվող իրավահարաբերությունները իրենց բնույթով չեն հանդիսանում քաղաքացիաիրավական, ուստի կիրառելի չէ «առանց մեղքի պատասխանատվության» սկզբունքը, այլ կիրառելի է «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքը:

Ընկերությունը հղում անելով Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասին նշել է, որ օրենսդիրը սահմանել է այն պարտադիր պայմանները, որոնց առկայության դեպքում տնտեսավարող սուբյեկտներ գործողությունները կարող են որակվել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն:

Ընկերությունը հայտնել է նաև, որ 2023 թվականին «Домашние секреты» ապրանքային նշանով, զտաքաշը՝ 1կգ տոմատի մածուկի իրացումից ստացված հասույթի չափը կազմում է

Ընկերությունն այլևս չի իրականացնում նշված ապրանքի ներմուծում և/կամ իրացում:

***<u>4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.</u>***

1. Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 30-ի ««Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 207-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 207-Ա որոշում**) Ընկերության կողմից «Кубанское любимое» անվանումով ռաֆինացված, հոտազերծված, «БИО очистка» մակնշմամբ արևածաղկի ձեթի իրացումն այն դեպքում, երբ այդ ապրանքը չի հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, որակվել է որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

Թիվ 207-Ա որոշումը ուժի մեջ է մտել Ընկերության կողմից որոշումը ստանալու հաջորդող օրվանից՝ 2021 թվականի սեպտեմբերի 14-ին և անբողոքարկելի է դարձել 2021 թվականի նոյեմբերի 14-ից:

2. Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 12-ի ««Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 132-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 132-Ա որոշում**) Ընկերության կողմից «ECO GRECO» արտահայտության մեջ «ECO» մակնշմամբ յոգուրտ իրացնելն այն դեպքում, երբ այն չի հանդիսանում օրգանական գյուղատնտեսական արտադրանք, որակվել է որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

Թիվ 132-Ա որոշումը ուժի մեջ է մտել Ընկերության կողմից որոշումը ստանալու հաջորդող օրվանից՝ 2022 թվականի ապրիլի 16-ին և անբողոքարկելի է դարձել 2022 թվականի հունիսի 16-ից:

3. Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի ապրիլի 1-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 202-Ա հրամանի հիման վրա «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող առևտրի օբյեկտում իրականացվել է հսկիչ գնում (այսուհետ նաև՝ **Հսկիչ գնում**), որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 202 արձանագրությունը:

Հսկիչ գնման արդյունքում, ի թիվս այլնի, ձեռք է բերվել Ապրանքը, որի տարային փակցված պիտակի վրա առկա է հետևյալը. «Տոմատի մածուկ «Դոմաշնիե սեկրետի» 1-ին կարգ: Բաղադրությունը՝ տոմատի մածուկ, շաքարավազ, աղ, կայունացուցիչ-կարտոֆիլի օսլա, E1414, թթվայնության կարգավորիչ- կիտրոնաթթու, կոնսերվանտներ E211,E202: ՏՈՒ 10.39-17-017-45986955-2020, ՏՌ ՏՍ021/2011 Սննդային արժեքը (միջինացված) 1000 գ մթերքում ածխաջրեր 16գ: Էներգետիկ արժեքը 100 գ մթեթքում՝ 65 կկալ/270 կ/Ջ: Պահպանման ժամկետը 3 տարի: Արտադրման օրը և վերջնաժամկետը նշված են կափարիչի վրա: Պահել 0°C-ից մինչև +25°C ջերմաստիճանում և 75%-ից ոչ ավել օդի հարաբերական խոնավության պայմաններում: Բացելուց հետո պահել +2- +6 ջերմաստիճանում: Արտադրող «Գրանդ Սթար»: Ռուսաստան, Կրասնոդարի երկրամաս, 350086, քաղաք Կրասնոդար, Պոդսվեչնայա փողոց 2/1: Էլ. հասցե՝ domasniesekrety@gmail.com: Ներմուծող «Սիթի» ՍՊԸ, 0032, ՀՀ, ք. Երևան, փ. Մալաթիա-Սեբաստիա 143, հեռ.(+374)10-74-12-13 զտաքաշը՝ 1կգ»:

4. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի մայիսի 3-ի «Փորձաքննություն իրականացնելու մասին» թիվ 114-Ա հրամանի հիման վրա, ի թիվս այլ ապրանքների, Ապրանքն ուղարկվել է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ նաև՝ **ՊՈԱԿ**)՝ դրանում չոր նյութերի, քլորիդների (աղերի) զանգվածային մասը և շաքարի առկայությունը պարզելու նպատակով:

ՊՈԱԿ-ը 2024 թվականի մայիսի 27-ին Հանձնաժողով է ներկայացրել 2024 թվականի մայիսի 20-ի թիվ 3566 փորձարկման արձանագրությունը (այսուհետ նաև՝ **Փորձարկման արձանագրություն**), որի համաձայն՝ Ապրանքում լուծված չոր նյութերի զանգվածային մասը (առանց քլորիդների) փաստացի կազմում է 15.4%, իսկ քլորիդների զանգվածային մասը՝ 1.9% և չի համապատասխանում Տոմատային խտացրած մթերքների ընդհանուր

տեխնիկական պայմանների միջպետական ստանդարտի **ԳՕՍՏ-ի** և Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին:

5. ՊԵԿ-ի տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերության 2023 թվականի ընդհանուր հասույթը կազմում է

***5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.***

1. Հանձնաժողովի անբողոքարկելի դարձած թիվ 207-Ա որոշմամբ Ընկերության կողմից «Кубанское любимое» անվանումով ռաֆինացված, հոտազերծված, «БИО очистка» մակնշմամբ արևածաղիկի ձեթի իրացումն այն դեպքում, երբ այդ ապրանքը չի հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, որակվել է որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

2. Հանձնաժողովի անբողոքարկելի դարձած թիվ 132-Ա որոշմամբ Ընկերության կողմից «ECO GRECO» արտահայտության մեջ «ECO» մակնշմամբ յոգուրտ իրացնելն այն դեպքում, երբ այն չի հանդիսանում օրգանական գյուղատնտեսական արտադրանք, որակվել է որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

3. Ընկերության կողմից Ապրանքը ներմուծվում և իրացվում է որպես «Տոմատի մածուկ»:

4. Ապրանքի պիտակի վրա առկա են հետևյալ մակնշումները. Տոմատի մածուկ «Դոմաշնիե սեկրետի» 1-ին կարգ: Բաղադրությունը՝ տոմատի մածուկ, շաքարավազ, աղ, կայունացուցիչ-կարտոֆիլի օսլա, E1414, թթվայնության կարգավորիչ- կիտրոնաթթու, կոնսերվանտներ E211,E202: ՏՈՒ 10.39-17-017-45986955-2020, ՏՈ SU021/2011 Սննդային արժեքը (միջինացված) 1000 գ մթերքում ածխաջրեր 16գ: Էներգետիկ արժեքը 100 գ մթեթքում՝ 65 կկալ/270 կ/Ջ: Պահպանման ժամկետը 3 տարի: Արտադրման օրը և վերջնաժամկետը նշված են կափարիչի վրա: Պահել 0°C-ից մինչև +25°C ջերմաստիճանում և 75%-ից ոչ ավել օդի հարաբերական խոնավության պայմաններում: Բացելուց հետո պահել +2- +6 ջերմաստիճանում: Արտադրող «Գրանդ Սթար»: Ռուսաստան, Կրասնոդարի երկրամաս, 350086, քաղաք Կրասնոդար, Պոդսվեչնայա փողոց 2/1: Էլ. հասցե՝ domasniesekrety@gmail.com: Ներմուծող «Սիթի» ՍՊԸ, 0032, ՀՀ, ք. Երևան, փ. Մալաթիա-Սեբաստիա 143, հեռ.(+374)10-74-12-13 զտաքաշը՝ 1կգ»:

5. Փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքում լուծված չոր նյութերի զանգվածային մասը (առանց քլորիդների) փաստացի կազմում է 15.4%, իսկ քլորիդների զանգվածային մասը՝ 1.9% և չի համապատասխանում Տոմատային խտացրած մթերքների ընդհանուր տեխնիկական պայմանների միջպետական ստանդարտի՝ ԳՕՍՏ-ի պահանջներին:

ՊԵԿ-ի տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերության 2023 թվականի ընդհանուր հասույթը կազմում է

Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականին Ապրանքի իրացումից ստացված հասույթը կազմել է

***6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.***

***1) Ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.***

Վարույթը հարուցվել է Ապրանքի առնչությամբ Ընկերության վարքագծում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Սույն գործի շրջանակներում Ընկերությունը Դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

2023 թվականի հոկտեմբերի 6-ին տարանցիկ փոխադրման հայտարարագրի լրացուցիչ թերթիկում (դրանում առկա է ՀՀ մաքսային ծառայության կնիքը) նշված է, որ փոխադրվող Ապրանքը հետևյալն է. «консервированная томатная паста, приготовленная без добовления уксуса или уксусной кислоты, с содержанием сухого вещества 25%»: Այսինքն՝ ըստ փոխադրման հայտարարագրի լրացուցիչ թերթիկում առկա տեղեկությունների՝ փոխադրվող տոմատի մածուկում չոր նյութերի պարունակությունը կազմում է 25%, ինչը նշանակում է, որ «Գրանդ Սթար» ընկերության կողմից Ընկերությանը տրամադրված Ապրանքը համապատասխանում է Կանոնակարգի 2-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերության և ԳՕՍՏ-ի 5-րդ բաժնի 2-րդ մասի 2-րդ աղյուսակով նախատեսված պահանջներին:

«Գրանդ Սթար» ընկերության կողմից Ընկերությանը տրամադրվել է նաև 2023 թվականի հոկտեմբերի 6-ի որակի վերաբերյալ թիվ 765 վկայական, որի 5-րդ տողում նշված է հետևյալը. «Паста томатная 25% ТМ «Домашние секреты»», ինչպես նաև Ապրանքի համապատասխանու թյունը նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի վերաբերյալ նշվել է հետևյալը. «Соотвествие норм-тех документу - ТУ10.39.17-017-45986955-2020»:

Համաձայն «Գրանդ Սթար» ընկերության տնօրենի կողմից 2021 թվականի փետրվարի 1-ին Ընկերությանը տրված համապատասխանության մասին հայտարարագրի՝ «Գրանդ Սթար» ընկերության կողմից արտադրվող տոմատի մածուկը համապատասխանում է Կանոնակարգին: Բացի այդ, համապատասխանության մասին հայտարարագրում նշվել է, որ այն ընդունվել է հիմք ընդունելով «Փորձարկման արձանագրություն թիվ 0009. 1Д, 0010.1Д, 0011.1Д, 2021 թվականի հունվարի 25-ի դաշնային բյուջետային առողջապահական հաստատության Ուստ-Լաբինսկի մասնաճյուղի փորձարկման լաբորատոր կենտրոն «Կրասնոդարի երկրամասի հիգիենայի և համաճարակաբանության կենտրոն», RA, RU.514335; փորձարկման արձանագրություն 03.09.2020 թ. թիվ 1129, փորձարկման լաբորատորիա «Կրասնոդարի երկրամասի առևտրի արդյունաբերական պալատ» միություն, RA, RU, 21ПП90, հայտարարագրման սխեմա 3 д», «протокол испытаний թիվ 0009. 1Д, 0010.1Д, 0011.1Д от 25.01.2021г.

испытательный лабораторный центр Усть-Лабинского филиала Федерального бюджетного учреждения здравоохранения «Центр гигиены и эпидемиологии в Краснодарском крае», RA, RU, 21ПП90, Схема декларирования 3 д» «.», ինչը վկայում է այն մասին, որ Ապրանքн ենթարկվել է փորձաքննության:

Վերը նշված փաստաթղթերը հիմք ընդունելով՝ Ընկերության մոտ իրավացիորեն ձևավորվել է այն համոզմունքը, որ «Գրանդ Սթար» ընկերության կողմից մատակարարված ապրանքը ամբողջությամբ համապատասխանում է օրենսդրական պահանջներին, և այլևս որևէ կասկած չի հարուցվել Ապրանքի որակի հետ կապված: Ապրանքի ներմուծման ժամանակ ստանալով նշված փաստաթղթերը՝ Ընկերությունը դրսևորել է պատշաճ և բավարար ջանասիրություն համոզվելու, որ Ապրանքի որակական հատկանիշները համապատասխանում են ներկայացվող պահանջներին, ուստի խոսք գնալ չի կարող Ընկերության կողմից հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության մասին:

Ընկերությունը գտնում է, որ տվյալ դեպքում Վարույթի ընթացքում անհրաժեշտ է պարզել Ընկերության մեղքի առկայությունն այն պայմաններում, երբ առկա են մի շարք փաստաթղթեր Ապրանքի՝ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ:

Ընկերությունը նշել է, որ անկախ այն հանգամանքից, թե Վարույթի ընթացքում կհաստատվի Ընկերության կողմից ներմուծված տոմատի մածուկի համապատասխանությունն իրավական նորմերի պահանջներին, թե ոչ, այնուամենայնիվ, Ընկերության մեղքը Ապրանքի՝ իրավական նորմերին համապատասխան չլինելու դեպքում բացակայում է, քանի որ Ընկերությունը ստացել է տոմատի մածուկ արտադրող «Գրանդ Սթար» ընկերության կողմից համապատասխան երաշխիքներ պատշաճ որակի Ապրանք ձեռքբերելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը հարկ է համարել Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ օրենսդրությամբ նախատեսված չէ Ընկերության պարտականությունը յուրաքանչյուր դեպքում իրականացնել ներմուծվող ապրանքի փորձաքննություն, Ընկերությունը չունի բավարար ռեսուրսներ իրականացնելու այն, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքում ներմուծվող ապրանքների փորձաքննություն իրականացնելը լուրջ խոչընդոտներ կհարուցի Ընկերության տնտեսական գործունեության իրականացմանը, այդ իսկ պատճառով մատակարար ընեկերությունների կողմից համապատասխան երաշխիքների տրամադրման դեպքում Ընկերությունը դրանք հիմք է ընդունում, և ձեռքբերվող ապրանքերի լրացուցիչ ստուգումներ չեն իրականացվում: Հատկանշական է նաև, որ յուրաքանչյուր ապրանք ներմուծելիս փորձաքննության իրականացումը նույնպես չի կարող հանդիսանալ երաշխիք ապրանքի անհամապատասխանությունը բացահայտելու համար, քանի որ ամբողջ խմբաքանակը չի կարող ենթարկվել փորձաքննության, իսկ ընտրված նմուշների փորձաքննությունը չի բացառում նույն խմբաքանակի այլ ապրանքների որակի անհամապատասխանությունը:

Ամփոփելով վերը նշվածը՝ Ընկերությունը եկել է այն եզրահանգման, որ չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության, քանի որ բացակայում է Ընկերության մեղքը, և վերջինիս տիրապետման ներքո առկա ապացույցները հաշվի առնելով՝

Ընկերության մոտ որևէ կասկած չի հարուցվել Ապրանքի' օրենսդրությամբ նախատեսված պահանջներին ենթադրաբար համապատասխան չլինելու վերաբերյալ:

Բացի դա, Ընկերությունը չլինելով Ապրանքի արտադրողը չի կարող պատասխանատվության ենթարկվել հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության համար այն դեպքում, երբ վերջինիս Աապրանքի որակական հատկանիշների մշակման փուլում որևիցե գործողություն չի իրականացրել, այլ ներմուծել և իրացրել է արդեն պատրաստի Ապրանքը, որն ուղեկցվել է որակի համապատասխանությունը հաստատող մի շարք փաստաթղթերով:

Ամփոփելով նշվածը Ընկերությունը փաստել է, որ տվյալ դեպքում Ընկերության գործողություններում բացակայում են Վարույթով նախատեսված հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշները, ուստի բացակայում է իրավախախտման դեպքը, որպիսի պայմաններում Վարույթն ենթակա է կարճման:

Ընկերությունը հղում կատարելով Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և Օրենքի 92-րդ հոդվածին, ինչպես նաև hաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության գործողություններում և վարքագծում բացակայում է իրավախախտման դեպքը' խնդրել է Հանձնաժողովին Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց չկիրառել և կարճել Վարույթը, իսկ այնուամենայնիվ Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու դեպքում' տալ նախազգուշացում:

Ընկերությունը Դիրքորոշմանը կից ներկայացրել է 06.10.2023թ. տարանցիկ փոխադրման հայտարարագրի լրացուցիչ թերթիկի պատճենը, «Գրանդ Սթար» ընկերության կողմից Ընկերությանը տրամադրված 06.10.2023թ. որակի վերաբերյալ թիվ 765 վկայականը, «Գրանդ Սթար» ընկերության տնօրենի կողմից 2021 թվականի փետրվարի 1-ին Ընկերությանը տրված համապատասխանության մասին հայտարարագրի պատճենը, 2021 թվականի հունվարի 25-ի թիվ թիվ 0009. 1Д, 0010.1Д, 0011.1Д փորձարկման արձանագրությունների պատճենները և 2020 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1129 փորձարկման արձանագրության պատճենը:

Ընկերությունը Դիրքորոշում 2-ով հայտնել է, որ Տեղեկանքում հաշվի չի առել Ընկերության կողմից ներկայացված փաստարկներն առ այն, որ նշված ապրանքը ներմուծելուց Ընկերությանը տրամադրվել են մի շարք փաստաթղթեր, որոնցով հաստատվել է ապրանքը ԳՈՍՏ-ի պահանջներին համապատասխանելու փաստը, մասնավորապես՝ «Գրանդ Սթար» ՍՊԸ-ի կողմից Ընկերությանը տրամադրվել է 06.10.2023թ. որակի վերաբերյալ թիվ 765 վկայական, ինչպես նաև համապատասխանության մասին հայտարարագիրը, որոնց բովանդակությունից բխում է, որ ապրանքը համապատասխանում է սահմանված պահանջներին: Հատկանշական է, որ հայտարարագրի կազմման համար հիմք են հանդիսացել փորձաքննության արդյունքները: Բացի այդ 06.10.2023թ. տարանցիկ փոխադրման հայտարարագրի լրացուցիչ թերթիկում (դրանում առկա է ՀՀ մաքսային ծառայության կնիքը) նույնպես նշվել է, որ փոխադրվող տոմատի մածուկում չոր նյութերի պարունակությունը կազմում է 25%:

Ուշադրության է արժանի նաև այն, որ օրենսդրությամբ, նշված ապրանքի ներմուծման ժամանակ որակի համապատասխանության հարցը պարզելու համար

սահմանված չէ փորձաքննության անցկացման պարտադիր պահանջ, ուստի Ընկերությունը ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունից ելնելով իրավացիորեն ենթադրել է, որ իր կողմից իրացվող ապրանքն ամբողջությամբ համապատասխանում է սահմանված պահանջներին:

Ասվածից հետևում է, որ Ընկերությունը դրսևորել է պատշաճ և բավարար ջանասիրություն համոզվելու, որ ապրանքի որակական հատկանիշները համապատասխանում են ներկայացվող պահանջներին, ուստի Ընկերության գործողություններում բացակայում են հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշները:

Ընկերությունը հղում անելով Օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասին, 1089-րդ հոդվածին, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածին, ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-920 որոշմանը, Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6382/05/20 վարչական գործով 2023 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմանը հայտնել է, որ Վարույթի շրջանակներում քննարկվող իրավահարաբերությունները իրենց բնույթով չեն հանդիսանում քաղաքացիաիրավական, ուստի կիրառելի չէ «առանց մեղքի պատասխանատվության» սկզբունքը, այլ կիրառելի է «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքը:

Ընկերությունը հղում անելով Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասին նշել է, որ օրենսդիրը սահմանել է այն պարտադիր պայմանները, որոնց առկայության դեպքում տնտեսավարող սուբյեկտներ գործողությունները կարող են որակվել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն:

Ընկերությունը հայտնել է նաև, որ 2023 թվականին «Домашние секреты» ապրանքային նշանով, զտաքաշը՝ 1կգ տոմատի մածուկի իրացումից ստացված հասույթի չափը կազմում է

Ընկերությունն այլևս չի իրականացնում նշված ապրանքի ներմուծում և/կամ իրացում:

**Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը, նախևառաջ, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումների պարզաբանմանը.**

***1. Ինչպե՞ս է դրսևորվում անբարեխիղճ մրցակցություն իրավախախտման օբյեկտիվ կողմը.***

***2. Ինչպե՞ս է դրսևորվում հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմը.***

***3. Արդյո՞ք ԳՈՍՏ-ի պահանջներին չհամապատասխանող «Տոմատի մածուկ» անվանումով ապրանքի իրացումը կարող է հանգեցնել անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության.***

***4. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթում ո՞վ է կրում վարույթով պատասխանողի համար բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը.***

***5. Արդյո՞ք Հանձնաժողովը որոշում կայացնելիս պարտավոր է անդրադառնալ տնտեսավարող սուբյեկտի բոլոր փաստարկներին:***

***6. Արդյո՞ք ապրանքները իրացնելու նպատակով ներմուծող և իրացնող սուբյեկտները պատասխանատու են այդ ապրանքների անհամապատասխանության համար:***

***Առաջին հարցադրման կապակցությամբ.***

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է վարքագիծն անբարեխիղճ մրցակցություն որակելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունը կամ վարքագիծը, եթե այն.

- հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,
- խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 16-24-րդ հոդվածներում նկարագրված իրավախախտումների հատկանիշների առկայության հարցը գնահատում է Հանձնաժողովը:

Այսինքն, օրենսդրի կողմից սահմանված անբարեխիղճ մրցակցության առանձին դրսևորումների սահմանումը, ըստ էության, Օրենքի 16-րդ հոդվածի մասնավոր դեպքերի առարկայացումն է և, հետևաբար, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների քննարկման անհրաժեշտությունը բացակայում է անբարեխիղճ մրցակցության մասնավոր դեպքերից յուրաքանչյուրի, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության դեպքում:

***Երկրորդ հարցադրման կապակցությամբ.***

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցնելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով

ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալ կարգավորումների հիման վրա Հանձնաժողովը հարկ է համարում, նախևառաջ, արձանագրել, որ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցությունն իր բնույթով ունի ձևական կազմ, այսինքն՝ հետևանքի վրա հասնելը՝ սպառողի մոլորվելու փաստը, վարքագիծը Օրենքի 21-րդ հոդվածով որակելու պարտադիր և անհրաժեշտ պայման չէ: Ըստ այդմ, վարքագիծը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտում որակելու համար բավարար է միայն մոլորվելու հնարավորությունն ու հավանականությունը, այլ ոչ թե ինքնին մոլորվելու փաստը:

Մյուս կողմից, հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտման ձևական բնույթը դրսևորվում է նրանում, որ արարքը կատարման փաստով համարվում է ավարտված: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ վայրում, այդ թվում՝ ինտերնետային կայքի տարբեր բաժիններում, այլ միջոցով կամ հետագայում անհրաժեշտ տեղեկությունները հայտնելը կամ այլ կերպ հասանելի դարձնելը իրավախախտումը չի վերացնում:

Միևնույն ժամանակ, կարևոր է արձանագրել, որ օրենսդիրը այս իրավախախտման օբյեկտիվ կողմի սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտահայտվում են.

1) ապրանքի բնութագրերի կամ իրացման պայմանների վերաբերյալ թյուր տպավորության՝ ապակողմնորոշման հնարավորության ստեղծմամբ, այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելու եղանակով.

2) սպառողին գովազդվող կամ իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով, այդ թվում՝ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալներ նշելու եղանակով.

3) տնտեսական մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող կամ սպառողների շահերը վնասող օրենքին հակասող գովազդով.

4) ցանկացած այլ դրսևորմամբ, որը ստեղծում է տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց բնութագրերի կամ այլ պայմանների վերաբերյալ մոլորեցնելու հնարավորություն:

Ընդ որում, միևնույն վարքագիծը միաժամանակ կարող է համապատասխանել հասարակության մոլորեցման մեկից ավելի դրսևորումներին: Այսպես, օրինակ՝

ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չիշատակելը կարող է ոչ միայն ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալ, այլ նաև ստեղծել թյուր տպավորության՝ ապակողմնորոշման հնարավորություն:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն առկա չէ, եթե կարող է վնաս հասցվել սպառողների կյանքին, առողջությանը, անվտանգությանը, հասարակական կամ պետական անվտանգությանը կամ շրջակա միջավայրին: Այլ կերպ ասած՝ եթե տնտեսավարող սուբյեկտի վարքագիծը վնասում է կամ կարող է վնասել բացառապես հիշատակված հանրային շահերը, ապա այն դուրս է Հանձնաժողովի իրավասության տիրույթից:

***<u>Երրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 882 որոշմամբ ընդունված «Մրգերից և բանջարեղենից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 023/2011) 2-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերության և ԳՕՍՏ-ի 5-րդ բաժնի 2-րդ մասի 2-րդ աղյուսակի համաձայն՝ տոմատի մածուկի մեջ լուծվող չոր նյութերի զանգվածային մասը չպետք է պակաս լինի 25%-ից:

ԳՕՍՏ-ի 5-րդ բաժնի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ խտացված լոլիկի արտադրանքի արտադրության մեջ չի թույլատրվում ավելացնել աղ, շաքարավազ, խտացուցիչներ և բուրավետիչներ:

ԳՕՍՏ-ի 5-րդ բաժնի 2-րդ մասի 2-րդ աղյուսակի համաձայն՝ տոմատի մածուկի բաղադրության կազմում քլորիդների զանգվածային բաժինը չպետք է ավել լինի 1.0%-ից:

Վերը նշված նորմերից պարզ է դառնում, որ ԳՈՍՏ-ի պահանջներին չհամապատասխանող ապրանքը որպես տոմատի մածուկ չի կարող իրացվել, քանի որ նման ապրանքների վրա այդպիսի անվանումների օգտագործումը հանգեցնելու է ապրանքի բնութագրերի վերաբերյալ թյուր տպավորության ստեղծման՝ ապակողմնորոշման հնարավորության և սպառողները համանման արտադրանքի պարագայում ակնկալելու են ապրանքին ներկայացվող չափանիշներին համապատասխանող ապրանք: Այսինքն, համանման արտադրանքի համար տոմատի մածուկ անվանման օգտագործումը պարունակում է անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

***<u>Չորրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-2-րդ մասերի համաձայն՝

1. Կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

2. Վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները, բացառությամբ այն ապացույցների, որոնց վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես հակառակ կողմի միջոցով, և որոնք հակառակ կողմը չի ներկայացրել վարչական վարույթի ընթացքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում է անձը: Ընդ որում, այն դեպքում, երբ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքները հերքող բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա այդ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է նրա վրա:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով: Ընդ որում, այն դեպքում, երբ անձը վարչական վարույթի ընթացքում չի ներկայացնում իր օգտին առկա բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ, զրկվում է դրանք նույնիսկ

դատական վարույթում ներկայացնելու հնարավորությունից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացնում է բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթն իրականացնում է Հանձնաժողովի գործունեության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն օրենքով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի համար սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չլինելու դեպքում համապատասխան հարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:

Նման պայմաններում ակնհայտ է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականության վերաբերյալ կարգավորումները հավասարապես կիրառելի են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթով պատասխանողի առնչությամբ, քանի որ այդ կապակցությամբ Օրենքը առանձնահատկություններ չի սահմանել:

***<u>Հինգերորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում.

բ) վարչական ակտը պետք է կազմված լինի սահմանված ձևի և նմուշի թղթի վրա:

2. Վարչական ակտը, որպես կանոն, պետք է տեղեկություններ պարունակի նաև այն ծախսերի և դրանք կրողների վերաբերյալ, որոնք կատարվել են ակտի ընդունման կապակցությամբ: Ծախսերը վերադարձնելու հետ կապված ակտ ընդունելու դեպքում պետք է նշվեն վերադարձման ենթակա գումարը և վերադարձման կարգն ու պայմանները:

3. Վարչական ակտը կարող է ունենալ ներդիրներ, հավելվածներ կամ լրացուցիչ այլ փաստաթղթեր, որոնց գործողությունը չի կարող գերազանցել վարչական ակտի գործողության ժամկետը: Ներդիրները, հավելվածները և լրացուցիչ այլ փաստաթղթերը ինքնուրույն վարչական ակտեր չեն, դրանք վարչական ակտի բաղկացուցիչ մասն են և գործում են այնքանով, որքանով գործում է բուն վարչական ակտը:

4. Վարչական ակտը պետք է պարունակի՝

ա) վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը.

բ) վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

գ) ակտի լրիվ անվանումը, դրա ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը.

դ) ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս).

ե) ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).

զ) ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս).

է) ակտի գործողության ժամկետը, եթե ակտն ընդունվում է որոշակի ժամկետով.

ը) ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

թ) ակտն ընդունող վարչական մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը, նրա ստորագրությունը.

ժ) ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը:

5. Միանման հարց կարգավորող վարչական ակտը կարող է ունենալ միասնական նմուշի ձև (ձևաթուղթ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը:

2. Հիմնավորում չի պահանջվում, եթե՝

ա) վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը չի շոշափում երրորդ անձանց իրավունքները.

բ) ակտի հասցեատիրոջը կամ այն անձին, ում շահերը վարչական ակտը շոշափում է, արդեն հայտնի է վարչական մարմնի դիրքորոշումը փաստական կամ իրավական հետևանքների վերաբերյալ, կամ այդ դիրքորոշումն ակնհայտորեն բխում է ակտի տեքստից.

գ) վարչական մարմինը նույնանման վարչական ակտեր է հրապարակում մեծ քանակությամբ կամ վարչական ակտերը հրատարակում է տեխնիկական միջոցների օգտագործմամբ, և յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտություն չկա:

3. Արգելվում է վարչական մարմնի ընդունած վարչական ակտերի հիմնավորումն այն փաստարկներով, որոնք չեն առնչվում տվյալ մարմնի իրավասությանը:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի պատճառաբանվածությանը՝ որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս, արձանագրել է, որ դատարանները պարտավորվում են իրենց որոշումները պատճառաբանել, սակայն դա չի կարող ընկալվել որպես յուրաքանչյուր փաստարկի մասով մանրակրկիտ պատասխան ներկայացնելու պահանջ: Պատճառաբանելու պարտականության ծավալը կարող է տարբեր լինել՝ կախված որոշման բնույթից և կարող է որոշվել միայն գործի հանգամանքների լույսի ներքո. անհրաժեշտ է հաշվի առնել, inter alia, այն բազմազան գրավոր փաստարկները, որոնք դատարաններում կարող է ներկայացնել դատավարության մասնակիցը, (...) (տե՛ս, Van de Hurk v. the Netherlands գործով Եվրոպական դատարանի 19.04.1994 թվականի վճիռը, կետ 61, Hiro Balani v. Spain գործով Եվրոպական դատարանի 09.12.1994 թվականի վճիռը, կետ 27):

Նույնաբովանդակ դիրքորոշում արտահայտել է նաև Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ արդար դատաքննության իրավունքը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի բարձրացրած բոլոր փաստարկներին (տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0531/05/16 վարչական գործով 2021 թվականի հոկտեմբերի 29-ի և թիվ ՎԴ5/0173/05/18 վարչական գործով 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշումները):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ վարչական ակտ կայացնելիս տնտեսավարող սուբյեկտի ոչ էական փաստարկներին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է: Ըստ այդմ, սույն գործի շրջանակում առանձին քննարկման առարկա չդարձված Վարույթով պատասխանողի փաստարկները Հանձնաժողովի կողմից գնահատվել են այդ տրամաբանությամբ:

***<u>Վեցերորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ **Օրենսգիրք)** 1088-րդ հոդվածի համաձայն՝ 1. Քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից:

2. Սույն հոդվածում նախատեսված կանոնները կիրառվում են միայն սպառողական, սակայն ոչ ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործման նպատակներով ապրանքներ ձեռք բերելու (աշխատանքներ կատարելու, ծառայություններ մատուցելու) դեպքերում:

Օրենսգրքի 1089-րդ հոդվածի համաձայն՝ 1. Ապրանքի թերությունների հետևանքով պատճառված վնասը տուժողի ընտրությամբ ենթակա է հատուցման վաճառողի կամ ապրանք արտադրողի կողմից:

2. Աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման աշխատանք կատարած կամ ծառայություն մատուցած անձի (կատարողի) կողմից:

3. Ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասին լիակատար կամ հավաստի տեղեկատվություն չտրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված անձանց կողմից:

Օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից

ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ուշադրության է արժանի Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3447/05/17 վարչական գործի շրջանակում 2022 թվականի ապրիլի 5-ի վճռով արտահայտած դիրքորոշումը.

«(…)դեղատնային գործունեություն իրականացնելու թույլտվություն (լիցենզիա) ունեցող ցանկացած սուբյեկտ նույն կերպ, ինչպես, որ դեղերի ցանկացած շրջանառություն իրականացնող սուբյեկտ, կրում է պարտականություն ձեռքբերելու, պահպանելու, իրացնելու, բաց թողնելու բացառապես այն դեղերը, որոնք գրանցված են դեղերի ռեգիստրում՝ միաժամանակ հաշվի առնելով և ստուգելով դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող, գրանցման հավաստագրի իրավատեր և այլն:»:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետով օրենսդիրը նախատեսել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Նշված իրավանորմի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

**Այսպիսով, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտները պատասխանատվություն են կրում «առանց մեղքի» սկզբունքով:** Հարկ ենք համարում նաև անդրադառնալ Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-1611 որոշմամբ ներկայացված դիրքորոշմանը, որի համաձայն՝ **վաճառք իրականացնող սուբյեկտի իրավաբանական անձ լինելու պայմաններում վերջինս ենթակա է տեղեկացվածության առավել բարձր չափանիշների, և իր իրավունքների իրացման շրջանակներում անհրաժեշտ գործողությունների ծավալը կարող է տարբերվել ֆիզիկական անձանց տեսանկյունից անհրաժեշտ ծավալից:**

«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքը տարածվում է սննդի շղթայի, ինչպես նաև սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների արտադրության և **շրջանառության փուլերում** սննդամթերքի անվտանգության ոլորտում ծագած հարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտների վրա:

«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Սննդամթերքի անվտանգության ապահովման պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու խնդիրներն են՝ սննդամթերքի անվտանգության ապահովման ոլորտի իրավական ակտերի կատարման ապահովումը և մարդու կյանքի, առողջության պահպանման նպատակով անվտանգ սննդամթերքի օգտագործման և սպառողների իրավունքների պաշտպանության գերակայությունը և սննդի շղթայի բոլոր փուլերում կատարվող գործառնությունների ժամանակ մարդու

կյանքի, առողջության և շրջակա միջավայրի անվտանգության երաշխիքների ապահովումը:

«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձն իրավունք ունի՝ **ներմուծել**, (...) իրացնել և տեղափոխել **միայն բուսասանիտարական զննման, ստուգման կամ փորձաքննության ենթարկված բույսեր, բուսական արտադրանք և կարգավորվող առարկաներ:**

«Սննդամթերքի մակնշման մասին» տեխնիկական կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.1-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ փաթեթավորված սննդամթերքի մականշվածքը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

7) սննդամթերքն արտադրողի անվանումը և գտնվելու վայրը կամ սննդամթերքն արտադրող անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը և գտնվելու վայրը (այսուհետ՝ արտադրողի անվանում և գտնվելու վայր), ինչպես նաև Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված դեպքերում արտադրողի կողմից լիազորված անձի անվանումն ու գտնվելու վայրը, ներմուծող կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը, կամ ներմուծող անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը և գտնվելու վայրը (այսուհետ՝ ներմուծողի անվանում և գտնվելու վայր).

Նույն Կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.8-րդ կետի համաձայն՝ երրորդ երկրներից մատակարարվող սննդամթերքի մականշվածքի մեջ նշվում են ներմուծողի անվանումը և գտնվելու վայրը:

Համանման կարգավորում նախատեսվել է նաև ներպետական օրենսդրական համակարգում, մասնավորապես՝

«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի մակնշումը պետք է ներառի՝ արտադրողի, **ներմուծողի,** վերջիններիս ներկայացուցչի անվանումը (անունը), գործունեության (բնակության) հասցեն:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1 ին մասի համաձայն՝ արտադրողը (կատարողը, **վաճառողը**) պարտավոր է ժամանակին սպառողին տրամադրել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ճիշտ ընտրության հնարավորությունը(...):

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասին ոչ ստույգ կամ թերի տեղեկատվության հետևանքով պատճառված վնասների հատուցման վերաբերյալ սպառողների պահանջները քննարկելիս անհրաժեշտ է ելնել ապրանքի (աշխատանքի, ծառայության) հատկությունների և բնութագրերի մասին սպառողի մասնագիտական գիտելիքների բացակայության ենթադրությունից:**

Վերոգրյալից բխում է, որ օրենքով սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի մակնշման մեջ բացի արտադրողից, ներմուծողի վերաբերյալ տվյալների նախատեսումը ինքնանպատակ չէ, և օրենսդրի իրական կամքը ներմուծողին որպես պատասխանատու սուբյեկտ դիտարկելն է, քանի որ վերջինս որպես

մասնագիտացված սուբյեկտ պարտավոր է քայլեր ձեռնարկել անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու համար և բավարար չափով տիրապետել ապրանքների հատկանիշների և բնութագրերի վերաբերյալ տեղեկատվությանը:

Ավելին, ներմուծողը, որը ապրանքը իրացնելու նպատակով է ներմուծում ՀՀ մաքսային տարածք և իրացնում է այն (այսուհետ նաև՝ **Ներմուծող կամ Վաճառող**), պարտավոր է սպառողին ժամանակին տրամադրել ապրանքների վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն և պատասխանատու է ոչ ստույգ կամ թերի տեղեկատվության հետևանքով սպառողներին պատճառված վնասների համար՝ ապրանքի հատկությունների և բնութագրերի մասին սպառողի մասնագիտական գիտելիքների բացակայության ենթադրությամբ պայմանավորված:

Այսպիսով, քանի որ իրացման նպատակով ապրանքներ ներմուծելը և հետագայում իրացնելը հանդիսանում է ինքնուրույն, սեփական ռիսկով և շահույթ ստանալու նպատակով իրականացվող գործունեություն՝ որպես ձեռնարկատիրական գործունեության առանձին տեսակ, ապա Ներմուծողը վերոնշյալ տեղեկատվության տրամադրման համար կրում է առանց մեղքի պատասխանատվություն:

Այսինքն, օրենսդիրը կարմիր թելի նման անցկացրել է այն գաղափարը, որ պատասխանատվության առումով ապրանք ներմուծողները հավասարեցված են արտադրողին:

Օրենքի նախաբանի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից /ՍԴՈ-881, 4 մայիսի 2010թ./:

Սահմանադրական դատարանն իր՝ 2015թ. հուլիսի 7-ի ՍԴՈ-1224 որոշման մեջ նշել է, որ՝ «…խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ»:

Մեկ այլ, 2011թ. հունիսի 7-ի ՍԴՈ-967 որոշման մեջ խտրականության արգելման վերաբերյալ նշվում է. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է»:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն՝ համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի միջև: Ըստ Եվրոպական դատարանի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել: Մասնավորապես, Abdulaziz, Cabales and Balkandali v. the United Kingdom, 28 May 1985 վճռում Եվրոպական դատարանը նշել է. **«…տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին»:**

Ստացվում է, պատասխանատվության առումով տեղական արտադրողի և Ներմուծողի նկատմամբ տարբերակված վերաբերմունքը չի բխում օրենսդրի իրական կամքից:

Շարադրվածի համաձայն՝ Հանձնաժողովը գտնում է, որ

***1. Իրացման նպատակով ապրանքների ներմուծումը ձեռնարկատիրական գործունեության ինքնուրույն տեսակ է, որի դեպքում գործում է առանց մեղքի պատասխանատվության սկզբունքը.***

***2. Իրացման նպատակով ապրանքներ ներմուծողը մասնագիտացված սուբյեկտ է, և պատասխանատվության տեսանկյունից հավասարեցվում է ապրանքն արտադրողին:***

***3. Իրացման նպատակով ապրանքներ ներմուծողը և իրացնողը պարտավոր է տիրապետել անհրաժեշտ տեղեկատվությանը՝ համապատասխանաբար կատարելով նաև ստուգման համար անհրաժեշտ գործողությունները և որի չանելու ռիսկը կրելու է անձամբ:***

***4. Իրացման նպատակով ապրանքներ ներմուծողը վաճառքը կազմակերպելիս պատասխանատու է ապրանքի, այդ թվում՝ ապրանքի անվանման վերաբերյալ ստույգ և հավաստի տեղեկատվության տրամադրման համար: Այս տեսանկյունից, հակառակ մոտեցման պարագայում տեղական արտադրողի և ներմուծողի նկատմամբ տարբերակված մոտեցմամբ խախտվում է խտրականության արգելքի սկզբունքը:***

***<u>Վերոշարադրյալ դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.</u>***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից Ապրանքն ներմուծվում և իրացվում է որպես «Տոմատի մածուկ»:

Ապրանքի պիտակի վրա առկա են հետևյալ մակնշումները. Տոմատի մածուկ «Դոմաշնիե սեկրետի» 1-ին կարգ: Բաղադրությունը՝ տոմատի մածուկ, շաքարավազ, աղ, կայունացուցիչ-կարտոֆիլի օսլա, E1414, թթվայնության կարգավորիչ- կիտրոնաթթու, կոնսերվանտներ E211,E202: ՏՈՒ 10.39-17-017-45986955-2020, ՏՌ SU021/2011 Սննդային արժեքը (միջինացված) 1000 գ մթերքում ածխաջրեր 16գ: Էներգետիկ արժեքը 100 գ մթերքում՝ 65 կկալ/270 կ/Ջ: Պահպանման ժամկետը 3 տարի: Արտադրման օրը և վերջնաժամկետը նշված են կափարիչի վրա: Պահել 0°C-ից մինչև +25°C ջերմաստիճանում և 75%-ից ոչ ավել օդի հարաբերական խոնավության պայմաններում: Բացելուց հետո պահել +2- +6 ջերմաստիճանում: Արտադրող «Գրանդ Սթար»: Ռուսաստան, Կրասնոդարի երկրամաս, 350086, քաղաք Կրասնոդար, Պոդսվեչնայա փողոց 2/1: Էլ. հասցե՝

domasniesekrety@gmail.com: Ներմուծող «Սիթի» ՍՊԸ, 0032, ՀՀ, ք. Երևան, փ. Մալաթիա-Սեբաստիա 143, հեռ.(+374)10-74-12-13 զտաքաշը՝ 1կգ»:

Փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքում լուծված չոր նյութերի զանգվածային մասը (առանց քլորիդների) փաստացի կազմում է 15.4%, իսկ քլորիդների զանգվածային մասը՝ 1.9% և չի համապատասխանում Տոմատային խտացրած մթերքների ընդհանուր տեխնիկական պայմանների միջպետական ստանդարտի՝ ԳՕՍՏ-ի պահանջներին:

Ստացվում է, որ Ընկերության կողմից ներմուծված և իրացված Ապրանքը մակնշվել է որպես տոմատի մածուկ, Ապրանքի բաղադրության մեջ, ըստ մակնշման, նշված չէ, որ դրանում առկա է քլորիդներ, մինչդեռ Փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքում հայտնաբերվել է քլորիդներ, որի զանգվածային մասը փաստացի կազմում է 1.9%, իսկ լուծված չոր նյութերի զանգվածային մասը (առանց քլորիդների) փաստացի կազմում է 15.4%, և չի համապատասխանում ԳՕՍՏ-ի պահանջներին: Այսինքն, Ապրանքը որպես տոմատի մածուկ իրացնելու և Ապրանքի մակնշման մեջ քլորիդների առկայության վերաբերյալ տեղեկատվության բացակայության և Ապրանքում լուծված չոր նյութերի զանգվածային մասը չնշելու պայմաններում, բացառապես լաբորատոր փորձաքննության միջոցով է հնարավոր տեղեկանալ Ապրանքում քլորիդների առկայության և Ապրանքում լուծված չոր նյութերի զանգվածային մասը (առանց քլորիդների) 15.4% կազմելու մասին:

Նշվածից բխում է, որ Ապրանքի գնման ժամանակ սպառողներն Ապրանքի բաղադրության մեջ քլորիդների առկայության և Ապրանքում չոր նյութերի զանգվածային չափի մասին որևէ կերպ չեն կարող տեղեկանալ: Մյուս կողմից էլ սպառողները Ապրանքի վրա «տոմատի մածուկ» անվանման մակնշումը տեսնելով՝ կարող են մտածել, որ այն առնվազն համապատասխանում է ԳՈՍՏ-ի պահանջներին:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը փաստում է, որ Ապրանքում լուծված չոր նյութերի զանգվածային մասի (առանց քլորիդների) 15.4% առկայությամբ և քլորիդների (որի զանգվածային մասը փաստացի կազմում է 1.9%) առկայությամբ Ապրանքը որպես «Տոմատի մածուկ» մակնշելը և իրացնելը կարող է.

1. հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման),

2. սպառողներին հնարավորություն չտալ ամբողջական պատկերացում կազմել Ապրանքի վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը արձանագրում է, որ Ընկերության կողմից Ապրանքը «Տոմատի մածուկ» անվանումով իրացնելն այն դեպքում, երբ այն չի համապատասխանում ԳՈՍՏ-ի պահանջներին, պարունակում է անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

***<u>2) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>***

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը սահմանում է պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը:

Օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանվում է Հանձնաժողովի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանության (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 9-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$Տ = Բ + Բ \times (Ծ - Մ)$$

Որտեղ՝

Տ-տուգանքի չափն է,

Բ-տուգանքի բազային գումարը,

Ծ-ծանրացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը,

Մ-մեղմացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը:

***<u>Բազային գումարի հաշվարկը.</u>***

Մեթոդաբանության 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող մեթոդը վերաբերում է անբարեխիղճ մրցակցությանը, բացառությամբ ակցիաների:

Մեթոդաբանության 21-րդ կետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող տուգանքի բազային գումարը հաշվարկվում է Բ = Հ x 2.5% x Ժ բանաձևով, որտեղ՝

Բ-ն տուգանքի բազային գումարն է,

Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթն է կամ ընդհանուր հասույթի կեսն է,

Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է:

*Ապրանքի իրացումից ստացված հասույթ.*

Մեթոդաբանության 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ապրանք է համարվում տվյալ իրավախախտման առնչությամբ Հանձնաժողովի կողմից հատկորոշված ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանում ներգրավված ապրանքը, իսկ ապրանքային շուկա հատկորոշված չլինելու դեպքում՝ ապրանքը, որն իրավախախտման հետևանքով ստացել է կամ կարող էր ստանալ իրացման համար առավելություն, իսկ դա որոշելու անհնարինության դեպքում՝ Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 875-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով նախատեսված դասակարգչի, ըստ հաջորդականության, ենթակարգում, ենթակարգում առանձնացված չլինելու դեպքում՝ կարգում, կարգում առանձնացված չլինելու դեպքում՝ դասում և դասում առանձնացված չլինելու դեպքում՝ խմբում ներառված ապրանքը:

Մեթոդաբանության 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ համապատասխան ժամանակահատվածը Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին դադարեցված իրավախախտումների դեպքում՝ իրավախախտման դադարեցմանը նախորդող տարին է: Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում՝ Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարին է: Իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարում 12 ամբողջական ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող, բայց ոչ ավել քան 12 ամբողջական ամսվա գործունեության ժամանակահատվածն է:

Մեթոդաբանության 22-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք ընդունվող հասույթի ընտրությունն իրականացվում է Մեթոդաբանության 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգով:

Մեթոդաբանության 15-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ապրանքի իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 16-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար ապրանքի իրացումից ստացված հասույթի փոխարեն հիմք է ընդունվում ընդհանուր հասույթը, եթե.

1) իրավախախտումը չի առնչվում որևէ ապրանքի հետ.

2) կիրառվող բազային գումարը հաշվարկվում է անձանց խմբում ընդգրկված այն տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ, որը չունի ապրանքի իրացումից ստացված հասույթ.

3) պետական մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ գնահատել ապրանքի իրացումից ստացված հասույթը և տնտեսավարող սուբյեկտը չի ներկայացրել ապացույցներ ընդհանուր հասույթի, ապրանքի իրացումից ստացված հասույթի և դրանց գոյացման հիմքերի վերաբերյալ:

Մեթոդաբանության 17-րդ կետի համաձայն՝ եթե ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի վերաբերյալ պետական մարմնից ստացված տեղեկատվությունը ներառում է համապատասխան ժամանակահատվածը չընդգրկող ամիսներ և առանձնացված չեն համապատասխան ժամանակահատվածում ներառված ամիսներին ստացված հասույթները, ապա տուգանքի բազային գումարի հաշվարկման համար համապատասխան ժամանակահատվածը չընդգրկող ամիսների հասույթը նվազեցվում է: Նվազեցվող հասույթի գումարը յուրաքանչյուր ամսվա համար հավասար է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հասույթի գումարի և այդ ժամանակաշրջանում ներառված ամիսների հարաբերակցությանը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը բազային գումարը հաշվարկելիս դիտարկում է

*Իրավախախտման տևողությունը.*

Մեթոդաբանության 19-րդ կետի համաձայն՝ իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ժ = Ա/12$$

Որտեղ՝

Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է.

Ա-ն դիտարկվող ժամանակահատվածն է:

Մեթոդաբանության 23-րդ կետի համաձայն՝ եթե դիտարկվող ժամանակահատվածը չի գերազանցում 12 ամբողջական ամիսը, ապա իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է 1, իսկ եթե դիտարկվող ժամանակահատվածը 12 ամբողջական ամսից ավելի է՝ իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է 1.5:

Մեթոդաբանության 2-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ դիտարկվող ժամանակահատվածը Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշում ընդունելու պահին դադարեցված իրավախախտումների դեպքում՝ Հանձնաժողովի կողմից վարույթի ընթացքում հաստատված իրավախախտման առաջին գործողությունից կամ վարքագծից մինչև իրավախախտման դադարեցման պահին ընկած ամբողջական ամիսների քանակն է:

*Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.*

***<u>Տուգանքի հաշվարկը.</u>***

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

Մեթոդաբանության 10-րդ կետի համաձայն՝ տուգանքի վերջնական գումարը կլորացվում է դեպի ներքև 1000 ՀՀ դրամի ճշգրտությամբ, հետևաբար Ընկերության նկատմամբ անհրաժեշտ է նշանակել ՀՀ դրամի չափով տուգանք:

***3) <u>Ընկերությանը հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ</u>.***

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության կողմից Ապրանքը «Տոմատի մածուկ» անվանումով իրացնելն այն դեպքում, երբ այն չի համապատասխանում ԳՕՍՏ-ի պահանջներին, պարունակում է անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որի համար Ընկերությանն անհրաժեշտ է հանձնարարել 10-օրյա ժամկետում շտկել Օրենքի խախտումը՝ դադարեցնել 2023 թվականի սեպտեմբերի 29-ին արտադրված «Домашние секреты» ապրանքային նշանով ապրանքի իրացումը, այդ թվում՝ այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցով դրանք իրացնելու դեպքում գրավոր հետ կանչել:

***<u>7. Եզրափակիչ մաս.</u>***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով, 101-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ, 71-րդ հոդվածներով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Домашние секреты» ապրանքային նշանով ապրանքը որպես տոմատի մածուկ իրացնելն այն դեպքում, երբ «Домашние секреты» ապրանքային նշանով ապրանքում լուծված չոր նյութերի զանգվածային մասը (առանց քլորիդների) փաստացի կազմում է 15.4%, իսկ քլորիդների զանգվածային մասը՝ 1.9% և չեն համապատասխանում Տոմատային խտացրած մթերքների ընդհանուր տեխնիկական պայմանների միջպետական ստանդարտի (ԳՕՍՏ 3343-2017) պահանջներին, որակել որպես անբարեխիղճ մրցակցություն, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 373 000 (երեք հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամի չափով տուգանք:

3. «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնարարել.

1) 10-օրյա ժամկետում շտկել Օրենքի խախտումը՝ դադարեցնել 2023 թվականի սեպտեմբերի 29-ին արտադրված «Домашние секреты» ապրանքային նշանով ապրանքի իրացումը, այդ թվում՝ այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցով դրանք իրացնելու դեպքում գրավոր հետ կանչել.

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված հանձնարարությունը կատարելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով հիմնավորող ապացույցներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշման 2-րդ կետը դրանով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարվելու, իսկ 3-րդ կետի 1-ին ենթակետով տրված հանձնարարությունը դրանում սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա են հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2024 թ. սեպտեմբերի 16
Երևան